

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018թ. III եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ

2018թ. III եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 48 առևտրային և 6 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 96-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 4-ի գործունեությունը՝ դադարեցվել:

4 հիմնարկ և 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 202 անհատ ձեռնարկատեր, 35-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 8-ի գործունեությունը՝ դադարեցվել:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ./ դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ./ դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադ.		
<i>Գենտրոնական մարմին</i>	6	9	2							17	119
<i>Ստեփանակերտ</i>	31	54	2		2		89	21	5	204	1154,5
<i>Ասկերան</i>	11	15			1		28	5		60	371,5
<i>Հաղրութ</i>		4					10			14	54
<i>Մարտակերտ</i>							26	1		27	79,5
<i>Մարտունի</i>		1					20	3		24	70,5
<i>Շուշի</i>	6	6					18	3	2	35	194,5
<i>Քաշաթաղ</i>		7			2		11	2	1	23	88
Ընդամենը	54	96	4		5		202	35	8	404	2131,5

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 139 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 2 270 500 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում III եռամսյակում արտաբյուջե է մտցվել 542 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 41 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սխտեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

Գործակալության պետ

Գ. Մարսիմովա